

ԿՐԿԻՆ ԼԻՈՆՈՒՄ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԼԻՈՆԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 20, կիրակի:

Վաղ առավոտյան Լիոնից և նրա շրջակայքից հայությունը հավաքվել էր ս. Հակոբ եկեղեցում: Եկեղեցին և նրան առընթեր ընդարձակ սրահը՝ լցված էր հավատացյալների խուռն բազմությամբ՝ ավելի քան հազար հոգի, որոնք եկել էին ներկա լինելու հայոց պատարագի սրբազան արարողությանը:

Ժամը 10-ին սկսվեց հայրապետական սուրբ պատարագը: Եկեղեցու բեմում Վեհափառ Հայրապետին սպասարկում էին տ. Դավիթ, տ. Գևորգ սրբազանները, տ. Մասիս վարդապետը և քահանայից ու սարկավագաց դասը:

Ս. պատարագին ներկա լինելու համար հրավիրվել էին հույն օրթոդոքս եկեղեցու Լիոնի եպիսկոպոս տ. Վլասիոսը, Լիոնի արքեպիսկոպոս, կարդինալ Ալեքսանդր Ռընարի ներկայացուցիչ աբբա Կլեմանը, հայ կաթողիկե համայնքի հոգևոր հովիվ հայր Գևորգ Զապարյանը և հոգևորական ու աշխարհական պաշտոնական այլ հյուրեր:

Եկեղեցու վերնատանը ս. պատարագի երգեցողությունը կատարում էր Լիոնի հայոց «Կոմիտաս» քառաձայն երկսեռ երգչախումբը՝ ղեկավարությամբ խմբավար Մարտեն Օֆլազի:

«Հայր մեր»-ից առաջ քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ տալով հրաժեշտի Իր պատգամն ու օրհնությունը լիոնահայությանը:

Հավարտ ս. պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն՝ «ի յիշատակ աշխարհազօրաց և զօրավարացն հայոց, որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի յամի 1918, վասն հաւատոց և հայրենեաց»:

ՈՂՋԵՐԹԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ԼԻՈՆԻ «ՏԵՐՄԻՆՈՒՍ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Ժամը 14-ին Լիոնի հայոց կրոնական ընկերակցության վարչությունը, ի պատիվ Հայոց Հայրապետի, կազմակերպեց հրաժեշտի ընդունելություն Լիոնի «Տերմինուս» հյուրանոցում՝ մասնակցությամբ ավելի քան 400 հրավիրյալների:

Ընդունելության ժամանակ ողջերթի ջերմ խոսք ասաց Լիոնի հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Դավիթ եպս. Սահակյանը:

Այնուհետև արտասանվեցին ողջերթի ջերմ ու խանդավառ ճառեր: Հանուն Լիոնի ազգային միության և լիոնահայության, հանդես եկան պրն. Պետրոս Գապաքճյանը, հանուն Դեսինի հայ եկեղեցու վարչության՝ պրն. Մեսրոպ Պայընտրյանը:

Ընդունելության ժամանակ ելույթ ունեցավ նաև տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, որը խանդավառ մթնոլորտում հրավիրեց Հայոց Հայրապետին՝ Իր հրաժեշտի պատգամն ու օրհնությունը տալու լիոնահայությանը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԸ ԼԻՈՆՈՒՄ
(20 մայիսի 1979 թ.)

Այսօր Մեզի համար երջանիկ օր մը եղավ, որովհետև նախ առավոտուն ձեր աղոթքի Տունին մեջ, մենք միասին աղոթեցինք, իսկ հիմա, այս կամարներուն տակ, կրկին ձեզի կհանդիպինք: Առավոտուն դուրսը թեև երկինքը ամպամած էր և թեթև կանձրևեր, բայց կարծեք մեր հոգիներեն ներս արևը կշողար, ինչպես և հիմա: Գուցե օտար մեկը, որ մեզ մոտեն չի ճանչընար, հեռվեն դիտելով մեզ, նույնիսկ անբացատրելի պիտի գտնե, թե այս Լիոնի հայերը ի՞նչ պատահած է, որ այսպես ոգևորված են, խանդավառված են, ուրախ-զվարթ են, ոմանք նույնիսկ ուրախության արտասուքներ ունին իրենց աչքերուն մեջ: Հեռու աշխարհե մը հոգևորական մը եկեր է, և հանկարծ այսպիսի անբացատրելի երևույթ: Սակայն իրականությունը այն է, թե ինչ որ մենք կտեսնենք, ինչ որ ամենուր տեղի կունենա, երբ Հայոց Հայրապետը այցելության կերթա Եվրոպա կամ Արևելք կամ Ամերիկա կամ Կ. Պոլիս, ամեն տեղ նույն երևույթը, նույն խանդավառությունը, նույն ոգևորությունը կպարզվի, նույն արտասուքները կհոսին, որովհետև ամեն տեղ նույն հայ ժողովուրդն է: Ասիկա հրաշալի երևույթ մըն է: Կկարծենք թե մեր օրերու աշխարհի հրաշալի երևույթներեն մեկն է ասիկա: Քիչ ժողովուրդներու մեջ կկրկնվի այս երևույթը: Ինքնագովություն չէ, որ կընենք, ոչ ալ գերագնահատում մեր ժողովուրդի նկատմամբ, բայց իրողությունը այս է, և ասիկա հրաշալի երևույթ է, պատիվ բերող երևույթ մըն է մեր ազգին, ձեզի բոլորիդ: Միայն այս երևույթը պիտի բավեր ըսելու՝ կարժե իրոք իբրև հայ ապրիլ այս աշխարհի վրա:

Ինը տարիներ անցան այն օրեն, երբ Մենք վերջին անգամ այցելեցինք ձեր քաղաքը: Ինը տարիներու ընթացքին, մենք զիրար չմոռցանք:

Չենք ուզեր կրկնել այն ճշմարտությունները, զոր արտասանեց Սերովբե Սրբազանը մեր եկեղեցվո նկատմամբ այնքան հուզիչ կերպով: Մենք կուզենք շարունակել՝ ըսելու համար, թե իրավ է, որ մեր եկեղեցին իր անցյալով փառավոր է, շատ գործ կատարած է: Բայց հարց տանք նաև այսօր, թե ի՞նչ կընե Հայաստանյայց եկեղեցին այսօր և ի՞նչ պետք է ընե տակավին ապագային: Պարզ է, և պարզ պետք է ըլլա բոլորիս, որ արտասահմանի հայության հիմնաքարը Հայաստանյայց եկեղեցին է միայն: Մյուս բոլոր հայ կազմակերպությունները իրենց տեղը և նպատակը ունին, բայց բոլորը մեկտեղողը, բոլորին աներևույթ կերպով ուժ և եռանդ տվողը, բոլորին գոյության իմաստ տվողը կա ու կմնա Հայաստանյայց եկեղեցին:

Մենք անձնական որոշ փորձառություն ունինք Ռումանիայեն: Մարդիկ եղան, կազմակերպություններ, հոսանքներ, որոնք եկեղեցիին ժամանակը անցած նկատեցին: Բայց նոր ժամանակները, նոր պայմանները այդ մտածելակերպը չհաստատեցին: Այսօր, Հայաստանի մեջ ալ, նույն կացությունը կդրսևորվի հոգևոր իմաստով: Հայաստանյայց եկեղեցին, սուրբ Էջմիածինը

ամեն տեղ, ամեն հայու սրտի մեջ ներկա է Հայաստանի մեջ: Նույնիսկ անոնք, որոնք հավատացյալ չեն, կհարգեն եկեղեցին և կգնահատեն անհրաժեշտությունը անոր գոյատևման: Առավել ևս արտասահմանի պայմաններու մեջ: Հետևաբար հարց կդրվի այսօր. քանի որ այսպես է, չի բավեր որ հոգևորականներս ինքնագովության մտածումներով բավարարվինք: Ընդհակառակը, եթե այդ է իրողությունը, մեր պարտականությունները ավելի ծանրակշիռ կդառնան, ավելի կշեշտվի մեր պատասխանատվությունը մեր ժողովուրդի առջև: Մենք՝ հոգևորականներս, եկեղեցվո մեջ գործող բոլոր աշխարհականներն ալ մեջը ըլլալով, լավ գիտակցելով այս ճշմարտությունը, առավել ևս խոր գիտակցությամբ, հավատքով, առավել պատասխանատվության զգացումով, առավել եռանդով պետք է աշխատինք, որպեսզի կատարենք մեր պատմական առաքելությունը: Մենք չենք ուզեր քննադատել այսօրվան մեր եկեղեցվո վիճակը, բայց կուզենք հաստատել անկեղծությամբ, որ մեր եկեղեցին ընդհանրապես, Հայաստանն ալ մեջը առած և արտասահմանը ամբողջ, մեր եկեղեցին իր դերը տակավին բավարար չափով չի կատարեր: Եվ մենք պետք է ձգտինք այդ կատարելության հասնիլ, կաթողիկոսեն սկսյալ մինչև մեր հետին եկեղեցական սպասավորը, մինչև ամեն եկեղեցական վարչության անդամ: Մեր առջև, մանավանդ արտասահմանի մեջ, մահու կենաց հարցեր դրված են, ազգապահպանման, հայապահպանման, հայ լեզվի պահպանման, հայրենաբաղձ զգացումներու ամրապնդման հարցեր: Ինչքան ծանրակշիռ է, հետևաբար, մեր՝ հոգևորականներուս պարտականությունը այսօր: Մենք կուզենք ընդգծել ի մասնավորի լեզվի հարցը, հայերեն լեզվի հարցը, որ վճռական նշանակություն ունի: Հնարավոր չափով պետք է կենդանի պահենք մեր մայրենին, մեր ոգեկանության այուներեն մեկը: Խաչատուր Աբովյանը, իր ժամանակին, «Վերք Հայաստանի» վեպին մեջ նշանավոր խոսք մը ունի իբրև պատգամ. «Ազգ մը պահողը իր հավատն է ու լեզուն»: Այդ պատգամը այսօր ալ ի զորու է, հատկապես արտասահմանի հայության համար: Հայաստանի մեջ մեր ժողովուրդը նախանձախնդիր է իր մայրենի լեզվի նկատմամբ: Հայաստանի Սահմանադրության մեջ հատուկ հոդվածով հոչակված է, որ պետական լեզուն հայերենն է:

Անշուշտ Մենք կգիտակցինք, որ ծանր դժվարություններ կան արտասահմանի մեջ հայկական դպրոցներ բանալու, պահպանելու, բայց այդ դժվարությունները անհաղթահարելի չեն: Ապացույց, որ արդեն որոշ չափով դպրոցներ բացվեցան, կբացվին և պիտի բացվին: Ամերիկայի մեջ ասկե 15 տարի առաջ, գրեթե ոչ ոք կմտածեր հայկական դպրոցի մասին: 1960-ին երբ Մենք այնտեղ էինք և կխոսեինք այդ մասին, ոչ մեկը Մեզ կհասկնար, մեր հոգևորականներն ալ մեջը ըլլալով: Բայց ահավասիկ անհնարը հնարավոր եղավ: Նախաձեռնող մարդիկ, զոհաբերվող մարդիկ, հավատք ունեցող մարդիկ դեպի հայոց ապագան, կարողացան Կալիֆոռնիայեն սկսելով դրպրոցներ հիմնել: Արդեն 7—8 դպրոցներ բացված են և հետզհետե պիտի բացվին Միացյալ Նահանգներու մեջ: Անշուշտ հնարավոր չէ, որ արտասահմանի բոլոր հայ երեխաները հայկական դպրոց երթան, ատիկա անկարելի բան է: Բայց եթե ձեր երեխաներու տասնեն մեկը հայերեն սորվի, մյուս ինքը իր ետևեն կքաշե: Մենք Վալանսեն կուգանք, և շատ մխիթարական է կացությունը այնտեղ, շնորհիվ մանավանդ տ. Նարեկ քահանայի, որ չորեքշաբթի օրերը կկազմակերպե հայերենի դասընթացներ, երբ ամբողջ օրը երեխա-

ները, շուրջ 150 աշակերտներ, կմնան եկեղեցիներու դահլիճներուն մեջ, հայկական մթնոլորտի մեջ, կսորվին հայերեն, կարդալ, գրել, երգ, պար:

Անավասիկ մխիթարական կացություն մը, որ օրինակ կրնա ծառայել նաև այլ համայնքներու Ֆրանսայի մեջ:

Մեր օրհնությունը բոլոր անոնց, որոնք այս գիտակցությամբ և այս հավատքով գործի լծված՝ իրենց պարտքը կկատարեն և պիտի կատարեն Աստուծո, մեր ազգի և մեր պատմության առջև:

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբի անդամներով, թանկագին հյուրը եղավ տեր և տիկին Կարպիս Ճնկտրյանների՝ նրանց հյուրընկալ հարկի տակ: